

1905-1906 թթ. ՀԱՅ-ԹԱԹՎԱԿԱՆ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԸ ԵՎ «ՄՇԱԿ» ԹԵՐԹԸ

Դ. Մ. ՄՈՒԽԵՍՅԱՆ
ՀՀ ԳԱԱ պատմության իմստիտուտի հայցորդ

Հարևանությամբ ապրող ժողովուրդների, մասնավորապես հայերի, վրացիների և Կովկասի թաթարների միջև այլատյացության դրսնորումներ միշտ էլ եղել են: Սակայն, 19-րդ դ. վերջին և 20-րդ դ. սկզբին ցարական իշխանությունները դրանք հասցրին պետական քաղաքականության մակարդակի և օգտագործեցին սեփական խնդիրները լուծելու, տեղերում իրենց ծրագրերն իրականացնելու նպատակով: Հայերի և թաթարների միջև նախ՝ խորացվեց այլատյացությունն արդյունաբերության՝ հատկապես Բաքվի նավթարդյունաբերության մեջ իրենց ձեռներեցությամբ աչքի ընկնող հայերի և իհմնականում թաթար սևագործ բանվորների միջև, ապա այդ հակամարտությունը հասցվեց բացահայտ թշնամանքի երկու կողմներին մինյանց դեմ հանելու, բուլացնելու, ջլատելու և առանձին-առանձին հնազանդեցնելու նպատակով: Հայ-թաթարական կրիվների ժամանակ կազմակերպված ինքնապաշտպանական կրիվների դեկավար, Դաշնակցություն կուսակցության գործիչ, հայդուկապետ և. Դումանն իր՝ «Նախագիծ ժողովրդական ինքնապաշտպանության» աշխատության նախարանում նշում է. «Եեղական կամ ազգային ընդհարումները հետևանք են պատմական, կրոնական, տնտեսական ու քաղաքական խճնված պայմանների և պատճառները միշտ էլ լինում են խորը և բարդ, քան առհասարակ կարծում են մարդիկ»:¹ Դրա իհմնական պատճառը 1905-1907 թթ. ռուսաստանյան առաջին բուրժուադեմոկրատական հեղափոխությունն էր: 1905-1906 թթ. հայ-թաթարական կրիվները նույն կողմների միջև 20-րդ դարի ընթացքում տեղի ունեցած բախումների շարքում առաջինն էին: Ներկայումս ադրբեջանական քարոզությունը պնդում է, իր թե 1905-1906 թթ., հայ ազգայնականները ցեղասպանության են ենթարկել իրենց ազգակիցներին: Այդ քարոզարշավի գագաթնակետն էր 2001 թ. մարտին Ալբրեթանի նախագահ Տեղադր Ալիկի հայտարարությունն այն մասին, որ 2 մլն ադրբեջանցի ցեղասպանության զոհ են դարձել, մասնավորապես 1905-1907 թթ. և 1918 թ., դրան հաջորդեց նախագահական հրամանագիրը՝ մարտի 31-ը ադրբեջանցիների ցեղասպանության օր հոչակելու մասին:²

¹ Դուման Ն., Նախագիծ ժողովրդական ինքնապաշտպանութեան, Հայ ժողովրդի երեք գլխավոր հատուածների համար, Լիբանան, 2005, էջ 10:

² Առավոտ օրաթերթ, 2001, մարտի 31:

Ընդհարումների հրահրման մեջ ցարական կառավարության դերի մասին հիշատակում էր նաև 1-ին պետդումայի թաթար պատգամավոր Զիարժանովը, նշելով. «Զինված ընդհարումներ չեն եղել: Բայց ահա հրապարակ են նետվում կառավարական գործակալները և թուրքերին վստահեցնում, թե հայերը կամենում են ստեղծել իրենց թագավորությունը և պիտի կլանեն թուրքերին, իսկ հայերին վախեցնում են պահիլամիզմի ուրվականներով»:³ Բազմաթիվ են փաստերն այն մասին, որ ցարական կառավարության հրահրմանով է թաթար ամբոխը հարձակվել խաղաղ հայերի վրա և սկսել արյունահեղությունը: Դեպքերի ժամանակակից, Թիֆլիսի քաղաքավոլուս Ա. Խատիսյանը իր՝ «Քաղաքապետի մը յիշատակները» մենագրությունում գրել է . «1905 թ. հեղափոխությունը ճնշելու վճիռը ստիաբեց ռուս կառավարությանը կտրուկ միջոցների դիմել կառավարության հակառակորդ տարրերի դեմ: Վճռվեցավ թուլացնել և հայկական կազմակերպությունները: Պետերբուրգին ժամարմեայի վարչությանը յուրահատուկ հրահրման էր ստացված.....գործի հրամանատարները, նահանգապետերն ու ոստիկանապետերն պարզ կերպով թուրքերու կողմ կանցնեին»⁴ Բացի ցարական կառավարությունից թաթար տարրերի հարձակումը հայերի վրա ծերնտու էր նաև թաթար կալվածատերերին, որոնք այդպիսով ձգուում էին շեղել թաթար իրավագործ զանգվածի պոռթկումը՝ կողմնորոշելով նրանց հայերի դեմ ձգտելով անգիտակցության մեջ պահել թաթար տարրը, նրան կեղեքելու համար:⁵ Բաքվում ապրող հայերը իրենց ջանասիրության և նախաճեռնող ոգու շնորհիվ կարծ ժամանակում զբաղեցրել էին բարձր դիրքեր՝ մշակույթի, առևտուրի և արդյունաբերության ասապարեզում:

Հայ-թաթարական ընդհարումներին ի թիվս ժամանակի այլ թերթերի և գործիչների, հանգամանորեն անդրադարձել է «Մշակ» թերթը: Նրա՝ 1905-1906 թթ. համարները ողողված են ընդհարումների մասին լուրերով: Թերթը մի կողմից համերաշխության հորդորներով փորձում է կռվի առաջն առնել, մյուս կողմից աղետյալների օգտին հանգամակություն կազմակերպել: Միաժամանակ աշխատել է լույս սփռել բախումների պատճառների վրա: «Մշակը» օբյեկտիվ էր, երբ հայտարարում էր, թե միայն հեղափոխական իրադրությունից դուրս գալու նպատակով է, որ ցարը հրահրեց հայ-ադրբեջական կոտորածները: Թերթը հայ-ադրբեջանական ընդհարումների ժամանակ բավական խորաթափանցություն է հանդես բերել, հասկացնելով ընթերցողներին, որ այդ արհավիրթը ցարական իշխանությունների սադրանքի հետևանք է, թերթն

³ Անանուն Դավիթ, Ռուսահայերի հասարակական զարգացումը 1901-1918 թթ., Վենետիկ, 1916, էջ 187:

⁴ Խատիսյան Ա., Քաղաքապետի մը յիշատակները, Պեյրութ, 1991, էջ 73:

⁵ Ա-Դ, Հայ-թաթարական ընդհարումները Կովկասում 1905-1906 թթ., էջ 6:

ընդգծել է նաև աղրբեջանական կողմի անասելի վայրագությունները: «Ով է մեղավոր» խմբագրական հոդվածում «Մշակը» անդրադառնալով Բարձի կոտորածին գրում է: «Տարիների ընթացքում մի սարսափելի թույն էր պատրաստվում մեր երկրում, ազգայնամոլության, օտարականության, փոխադարձ թշնամությունների թույնը.....ներկայ ժամը, խեղդող դրության մեջ հուզված, շփորչված միտքը ուզում է իմանալ, թե ով է մեղավորը, ասել թե մեղավորը այն անհատներն են, ովքեր կովել են իրար հետ սպանել միմյանց կլինի միամտություն: Այդպիսի դեպքեր երեկ և այսօր չեն ծագում: Ո՞վ է մեղավորը»:⁶ Մի այլ հոդվածում «Մշակի» թղթակից ե. Թոփչյանն իր՝ դարձյալ «Ով է մեղավոր» վերտառությամբ հոդվածում գրում է: «Խավար, սառը ծեռքն է մեղավոր»:

Թե՛ «Մշակում», և թե՛ ուրիշ լրագրերում արձանագրված է այն տիտուր երևույթը, որ կոտորածից առաջ լուրեր են տարածվել թուրքերի շրջանում, թե իբր հայերը հարձակում են գործելու թուրքերի վրա: Որքան էլ անհեթեր լինեն նման լուրերը իրենց եռթյամբ, բայց նրանց կրկնվելը և համար կերպով տարածվելը կարող էին նաև մի որոշ ազդեցություն անել ոյուրահավատ ամբոխի վրա և պատրաստել աննպաստ տրամադրություններ»:⁷ Բարձի կոտորածը ազդակ հանդիսացավ, որ կոտորածների ալիքը տարածվի նաև Ամրեկովկասի մյուս շրջաններում: Բարձում արձանագրվեցին այնպիսի իրադարձություններ, որոնք ապացուցեցին, որ թաքարների առաջին քայլերն ավելի հեռահար նպատակ ունեն: Այդ մասին «Սուլոր» հանդեսը գրում է: «Բարձի սարսափները միայն նախերգանք էին մի արյունահեղ ողբերգության, որի գործողությունների շարքը հայտնի չէր, թե ինչով կվերջանար»:⁸ Ընդհարումների կազմակերպման մեջ ցարական կառավարությունը և փոխարքան հենվում էին տեղական իշխանության առավել արգահատելի ներկայացուցիչների վրա: Գործելով «Բաժմանիր, որ տիրես» սկզբունքի հիման վրա, Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովը Երևանի նահանգում գեներալ-նահանգապետի արտօնություններով նշանակել էր Ալիխանով-Ազարսկուն, որն հովանավորում էր աղրբեջանցիներին, Գանձակի նահանգում «հայասեր» գեներալ Գոջողջապվին: Յարկավ դրանց և մյուս գեներալների հովանավորությունը թանկ էր նստում երկու ժողովուրդների վրա:⁹

Արևմտահայաստանում թուրքական բռնակալության դեմ մղված ազատագրական պայքարը և ցարական իշխանության ձուլման քաղաքականութ-

⁶ «Մշակ», 1905 թ., № 19:

⁷ Նույն տեղում, № 26:

⁸ «Սուլոր», 1905, №6:

⁹ Սուրայյան Ռ., Հայաստանը ուսւական առաջին ռևոլյուցիայի տարիներին, 1905-1907 թթ., Երևան, 1964, էջ 130:

յան դեմ մղված պայքարը, հայ ժողովրդի մի մասին հոգեբանորեն պատրաստել էր ինքնապաշտպանության, բայց մեծամասնությունը, ինչպես ընդգծում է «Մշակը» «սովոր էին կարծել, որ հարստությունն ամենակարող է, թե միլիոններով կարելի է հանգիստ քնել, բայց այս սարսափելի օրերը ցույց տվեցին, որ միայն ինքնապաշտպանությունն է մարդուն փրկողը, որ ուրիշ որևէ ուժի վրա հույս դնել չի կարելի»¹⁰ : Այս աղետալի օրերին հայ ժողովրդի ինքնապաշտպանության գործն իրենց վրա վերցրեցին Յայ հեղափոխական դաշնակցությունն ու Յնչակյան կուսակցությունը: Սակայն իիմնական հակադարձող ուժը Դաշնակցությունն էր կրվի դաշտ հանել: Բաքվում տիրող իրավիճակին ծանոթանալուց հետո Նիկոլ Ռումանն ու Աքրահամ Գյուլխանդանյանը, ՅՅԴ Բաքվի կենտրոնական կոմիտեի անունից մի նամակ հղեցին Բաքվի նահանգապետ Նակաշիձեին, որտեղ ասվում էր. «ՅՅԴ նախքան իր վրայ դրված սրբազն պատրականությունը ծեռնարկելը՝ պաշտպան հանդիսանայ անմեղ զոհերին, ավելորդ չի համարում հայտարարել ծեզ, պարոն նահանգապետ, որ եթե արյունահոսությունը չդադարեցնեք ծեր ծեռքում եղած բոլոր միջոցներով, այդ դեպքում դուք պատասխանատու եք ծեր արյունով, այլև ծեր մեղսակիցների արյունով»:¹¹ Նույն նամակի պատճենն ուղարկվեց նահանգապետի օգնականին և ոստիկանապետին: Դիմադրության անմիջական կազմակերպիչն ու ոգեշնչողը Նիկոլ Ռումանն էր, ով ոտքի համեց հայերին և հրոդուեց նոյն կերպ վարվել թուրք խուժանի հետ: Եվ միայն օրեր անց իր ցեղակիցներին դիմեց մուտումանների առաջնորդը՝ դադարեցնել կոտորած, որովհետև հայերին զսպելն այլևս անհնարին էր դառնում: 1905 թ. մայիսի 11-ին Բաքվում սպանվեց հայտնի հայատյաց, Բաքվի ջարդերի իիմնական իրահորող և կազմակերպիչ Բաքվի նահանգապետ Նակաշիձեն, Վրիժառուն երտասարդ Ղրոն(Ղրաստամատ Կանայան) էր: Կոտորածները շարունակվեցին և տարածվեցին 1905-1907 թթ. հայաշատ և թուրքաշատ քաղաքներում և գյուղերում՝ Թիֆլիս, Երևան, Գանձակ, Շամախի:

«Մշակը» արտատպում է «Бакинские известия» թերթից այն տեղեկությունը, ըստ որի փետրվարի 6-9-ը հայկական կոտորածների ժամանակ քաղաքում տիրում էր կատարյալ քառու և քաղաքացիները, իսկապես, հայերը, անձի գույքի ապահովություն չունեին: Այս պատճառով կազմվեցին կամավորական խմբեր հայ երիտասարդներից, յուրաքանչյուրը բաղկացած 10-15 հոգուց: Այդ խմբերը օր ու գիշեր պահում էին իրենց վատահված, զինված թուրքերի հարձակումներից, նրանք գիշերը պահում էին իրենց մասերը զինված թուրքերի հարձակումներից, նրանց հաճախ հաջողվում էր հետ նղել հարձա-

¹⁰ «Մշակ», 1905, №2:

¹¹ «Դրօշակ», 1905, №3:

կումները:¹² «Աղետից հետոյ» հոդվածում հոդվածագիրը տալով հայ-թաթարական ընդհարումների բնութագիրը, այն որակում է այսպես. «Ամենից առաջ արդարացի կինի ասել, որ Բաքվում տեղի է ունեցել «հայկական կոտորած, ճիշտ է հայերը հավաքված ամպերի մասին տեղեկություններ չունեին, բայց այն ևս ճիշտ է, որ թուրքերն էլ պակաս վճաներ չեն կրել, և ամսի 7-ից սկսած ոչ թե հայկական կոտորած է եղել, այլ արյունալի ընդհարում հայերի և թուրքերի միջև»:¹³

1905 թ. օգոստոսի 20-ին Բաքվում կրկնվում են հայ-թուրքական բախումները: Թերը բարձրացնում է ազգաբնակչությանը նյութական, իրավական, բժշկական օգնություն հասցնելու խնդիրը: 1905 թ. սեպտեմբերի 18-ին վերսկսվում են Երևանի ընդհարումները, կրիվներ են սանձազերծվում Շուշիում, Զանգեզուրում: «Մշակն» առաջարկում է հասարակական գործիչներին նոտածել, թե ինչպես փրկել ազգաբնակչությանը կոտորածից: Կոտորածներ են տեղի ունենում նաև Գանձակում, Թիֆլիսում...հայտարարվում է արտակարգ դրություն: Հայ-թուրքական կրիվները շարունակվում են 1906 թ. ընթացքում, «Մշակը» լիովին գրաղված էր չարիթի պատճառների և հետևանքների ուսումնասիրնամբ:¹⁴

Այն, որ ցարական իշխանությունները չեն ցանկանում դադարեցնել հայ-թաթարական ընդհարումները, և ավելին նպաստում էին դրանց տարածմանը, երևում է հայ-թուրքական խորհրդակցության որոշումների անկատարությունից: «Մշակի» խմբագիր Ա. Քալանթարը բազմիցս իր հոդվածներում քննադատել է նրանց վարքագիրը: Նրա՝ «Վերջին տեղեկություններ» հոդվածում ասվում է. «Երեք՝ մայիսի 18-ին, հայ-թուրքական հանձնաժողովի հայ և թուրք անդամները ներկայացան կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովին: Պատգամավորները հայտնեցին, որ նրանք չեն տեսնում իրագործված այն որոշումները, որոնք կայացրել էին թե համագումարը, և թե՝ ներկա խորհրդակցությունը իր միասում: Գյուղերը ապահովություն չեն ստացել, ժողովրդին զինարափ են արել, սպանությունը և թալանը շարունակվում են, ճանապարհները անապահով են»:¹⁵ Մեկ ուրիշ՝ «Կարկարեկ եղած» վերտառությամբ հոդվածում Քալանթարը գրում է. «Այստեղ այլևս հայ-թուրքական ընդհարման մի հարց չէ մեր առաջ, այլ մի ուրիշ սարսափելի երևություն: Ոչ հայերը, և ոչ թուրքերը չեն ուզում կրվել, բայց կրվում են: Նրանցից յուրաքանչյուրը դիմում է վարչությանը՝ բողոքելով ծանր իրականության վրա: Բայց իրականությունը չէ փոխվում: Ժողովրդը շատ մեծ ուշադրությամբ հետևում է վարչության բոլոր

¹² «Մշակ», 1905, № 29:

¹³ Նույն տեղում:

¹⁴ Նույն տեղում, № 20:

¹⁵ «Մշակ», 1906 թ., № 5:

քայլերին և գործողություններին և համոզվում է, որ այդ վարչությանը հարկա-
վոր չէ ավազակների զսպումը»:¹⁶

Ցարական իշխանությունների կողմից հրահրված հայ-թաթարական
ընդհարումները սկիզբ դրեցին Երկու հարևան ժողովուրդների միջև թշնամութ-
յանը, միմյանց նկատմամբ անհանդուրժողական վերաբերմունքին, հետագա-
յում Աղրթեցանի կողմից հայկական տարածքների՝ Նախիջևանի, ապա Լեռնա-
յին Ղարաբաղի բռնազավրմանը, այս դեպքում արդեն Խորհրդային Ռուսա-
տանի ղեկավարների օժանդակությամբ:

«Մշակ» թերթը լայնորեն լուսաբանել է 19-րդ դ. սկզբին ցարական իշ-
խանությունների կողմից հրահրված հայ-թաթարական ընդհարումները, նատ-
նամշել դրանց խկական մեղավորներին և հաշտության ուղիներ է փնտրել Եր-
կու հարևան ժողովուրդների հաշտեցման ուղղությամբ: Միաժամանակ, թերթը
պաշտպանել է հայերի գինված ինքնապաշտպանության գաղափարը: Իր հա-
րուստ լրատվությամբ «Մշակը» հանդիսանում է տվյալ ժամանակաշրջանի,
մասնավորապես, 1905-1906 թթ., այն հիմնական աղբյուրներից մեկը, որում ե-
ղած նյութերը անհրաժեշտ են հայ-թաթարական ընդհարումների ուսումնա-
սիրման և ամբողջական պատկեր ունենալու համար:

**Բանալի բառեր - «Մշակ», թաթարական, Նիկոլ Դումա, Ցարական, իշ-
խանություն, Գանձակ**

ARMENIAN-TATAR CONFRONTATIONS OF 1905-1906 AND THE NEWSPAPER “MSHAK”

H. M. MUSESYAN
*Researcher of the RA National
Academy of the Institute of History*

The aim of this article is to study the releases of 'Mshak' newspaper of 1905-1906
as a testimony of that time to introduce the right history of Armenian-Tatar
confrontations.

¹⁶ Նույն տեղում, № 107:

**1905-1906 гг. АРМЯНО - ТАТАРСКИЕ КОНФЛИКТЫ И ГАЗЕТА
“МШАК”**

Г. М. МУСЕЯН

*Соискатель Института
истории национальной академии наук РА*

В статье рассмотрены исследования номера газеты Мшак 1905-1906 гг., как свидетельство времени, чтобы передать подлинную историю армяно-татарского конфликта.